



**«Կառավարության ֆինանսների կառավարման
տեղեկատվական համակարգի» ներդրման ծրագրի
ՓՈՒԼ 2.2-ի Հաշվետվություն**

**ԿՖԿՏՀ ներդրման մոդել
ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ**

Բովանդակություն

Հապավումներ	1
Ներածություն	1
Գլուխ 1: Առկա գործընթացների ամփոփում.....	2
1.1 Ծախսային մաս	2
1.1.1 Պետական բյուջեի կազմման փուլեր	2
1.1.2 Պետական բյուջեի հիերարխիա.....	3
1.1.3 Բյուջետային ֆինանսավորման հայտ	4
1.1.4 Դերակատարներ.....	7
1.1.5 Համայնքների բյուջե	9
1.2 Եկամտային մաս	10
1.3 Բյուջեի հաշվեկշռում (դեֆիցիտի հաշվեկշռում).....	12
Գլուխ 2: Բյուջետավորման մոդուլի կառուցվածքային նկարագրություն	14
2.1 Բյուջեի կազմում ենթամոդուլ.....	16
2.2 Եկամուտների կանխատեսում ենթամոդուլ	17
2.3 Բյուջեի հաշվեկշռում (դեֆիցիտի հաշվեկշռում) ենթամոդուլ	17
2.4 Համայնքների բյուջեի ենթամոդուլ	18
2.5 Գանձապետարան մոդուլ	18
2.6 Գնումների մոդուլ	19
2.7 Հանրային հատվածի հաշվապահության մոդուլ	19
2.8 Պետական պարտքի և բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլներ.....	19
2.9 Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ.....	19
2.10 Փոխանակվող տվյալներ.....	21
Գլուխ 3: Բյուջետավորման մոդուլի ֆունկցիոնալ նկարագրություն	23
3.1 Չափաքանակների սահմանում	23
3.2 Բյուջեի կազմում.....	24
3.2.1 Տվյալների մուտքագրում՝ 4-րդ մակարդակ.....	25
3.2.2 Բյուջեի հայտի կազմում 3-րդ մակարդակ	26

3.2.3 Բյուջեի հայտի կազմում 2-րդ մակարդակ	31
3.2.4 Բյուջեի հայտերի ստուգում և հաստատում՝ 1-ին մակարդակ	32
3.3 Նոր նախաձեռնություններ	35
3.4 Վերաբաշխում	36
3.4.1 Վերաբաշխում առանց ՀՀ Կառավարության հաստատման	36
3.4.2. Վերաբաշխում ՀՀ Կառավարության որոշմամբ	38
3.5 Ոչ հարկային եկամուտների կանխատեսում.....	40
3.6 Բյուջեի հաշվեկշռում (դեֆիցիտի հաշվեկշռում).....	43
3.7 Համայնքների բյուջե.....	45
3.7.1. Համայնքների հաստատված բյուջեների ստացում.....	45
3.7.2 Համայնքների նախահաշիվների ստուգում հաստատված բյուջեների տվյալների հետ	47

Հապավումներ

ԲԳԿ	Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ
ԲՄԿ	Բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչ
ԲԳԿՎ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
ԳՄԱ	Գնումների միասնական անվանացանկ (CPV)
ՊՈՍԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ՊԿ	Պետական կազմակերպություններ
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթկառուցվածքների նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե

Ներածություն

Սույն փաստաթղթում նկարագրված է Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) շրջանակում Բյուջետավորման մոդուլի համար առաջարկվող կառուցվածքային և ֆունկցիոնալ նկարագրությունը:

Առաջարկների ձևավորման համար հիմք է հանդիսացել Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության (ԲԳԿՎ) աշխատակիցների և կատարող կողմի փորձագետների իրականացված համատեղ աշխատանքները, քննարկումները և առաջարկությունները:

Փաստաթուղթը կառուցված է 3 գլուխներից՝

Գլուխ 1 - Առկա գործընթացների ամփոփում: Մանրամասն ներկայացված է բյուջեի 3 հիմնական բաղադրիչների՝ ծախսի(ելքի), եկամուտի(մուտքի) և դեֆիցիտի ձևավորման գործընթացները:

Գլուխ 2 - Բյուջետավորման մոդուլի կառուցվածքային նկարագրություն: Ներկայացված են Բյուջետավորման մոդուլի (այդ թվում 4 ենթամոդուլների) և մյուս մոդուլների հետ կապը և միմյանց միջև տվյալների փոխանակման ավտոմատացման տարբերակները՝ հիմք ընդունելով տարբեր մոդուլների պատասխանատուների հետ իրականացված քննարկումների արդյունքները:

Գլուխ 3 - Բյուջետավորման մոդուլի ֆունկցիոնալ նկարագրությունը: Նկարագրված են ԿՖԿՏՀ շրջանակում բյուջետավորման մոդուլի (այդ թվում 4 ենթամոդուլների) օգնությամբ իրականացվող գործընթացների ավտոմատացման առաջարկությունները:

Գլուխ 1: Առկա գործընթացների ամփոփում

1.1 Ծախսային մաս

Պետական բյուջեն Կառավարության ֆինանսական պլանն է, որը կազմվում է մեկ օրացուցային տարվա համար: ՀՀ-ում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն հիմնված է երկու մակարդակի բյուջեների ամբողջության վրա՝ առաջին մակարդակ՝ **պետական բյուջե** (ներկայացված է 1.1.1-1.1.4 ենթագլխներում), երկրորդ մակարդակ՝ **համայնքների բյուջեներ** (ներկայացված է 1.1.5 գլխում): Պետական բյուջեն եւ համայնքների բյուջեները միասին կազմում են Հայաստանի Հանրապետության **համախմբված բյուջեն**:

1.1.1 Պետական բյուջեի կազմման փուլեր

Պետական բյուջեի նախագծի կազմման գործընթացը սկսելու համար ՀՀ ՖՆ ԲԳԿՎ կողմից յուրաքանչյուր տարվա սկզբին ԲԳԿ մարմիններին են տրամադրվում **մեթոդական ցուցումներ**¹՝ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) և առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների **բյուջետային հայտերի** կազմման և դրանք ՀՀ ՖՆ ներկայացման համար¹: Հայտերի կազմման համար ԲԳԿ-ները առաջնորդվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված **նախնական չափաքանակներով**²:

ՄԺԾԾ (ներառյալ առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման) հայտի հիմնական նպատակն է ներկայացնել պետական մարմնի համակարգի (բնագավառի) ծախսային ռազմավարությունը հաջորդ երեք տարվա համար և առաջիկա տարվա պետական բյուջեի ծախսային ծրագրերի և միջոցառումների ֆինանսական գնահատականը:

Հայտում ներկայացվում են պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների գծով առաջիկա տարվա ծախսերի հաշվարկները և ՄԺԾԾ ծախսերի գնահատականները: Ընդ որում, առաջիկա տարվա համար տեղեկատվությունը ներկայացվում է մանրամասն, պետական բյուջեի շրջանակներում պետական մարմնի կողմից իրականացման ենթակա ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ մանրամասն հաշվարկ-հիմնավորումների հետ միասին՝ բացված ըստ առանձին ծախսատեսակների:

¹ Մեթոդական ցուցումների տրամադրումը ԲԳԿ մարմիններին առավել մանրամասն նկարագրված է «ԲՄ1-ՄԺԾԾ, այդ թվում պետական բյուջեի կազմման մեթոդական ցուցումների մշակում և տրամադրում հայտատու մարմիններին» բիզնես գործընթացում:

² Նախնական չափաքանակների տրամադրումը առավել մանրամասն նկարագրված է «ԲՄ2-Առաջիկա տարիների բյուջեներից հատկացումների նախնական կողմնորոշիչ չափաքանակների հաշվարկում և ներկայացում ԲԳԿ մարմիններին» բիզնես գործընթացում:

Ներկայացված հայտերի հիման վրա՝ **ՀՀ Կառավարությունը** յուրաքանչյուր տարի հունիս-հուլիս ամիսներին ընդունում է **որոշում** պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (**ՄԺԾԾ**) հաստատելու մասին և ներկայացնում է ԱԺ ի գիտություն:

Կառավարության որոշման ընդունումից հետո ԲԳԿ մարմինները ներկայացնում են առաջիկա տարվա **վերանայված հայտերը (ներառյալ եռամսյակային(աճողական) համամասնություններով բաշխված տվյալները)**՝ հաշվի առնելով ՄԺԾԾ հաստատումից հետո ընդունված իրավակարգավորումները, քաղաքական հանձնառությունները, ինչպես նաև ՀՀ ԱԺ գլխադասային հանձնաժողովներից ստացված՝ ԱԺ պատգամավորների առաջարկությունները արդյունքային ցուցանիշների մասով³: Հայտերը ամփոփելուց հետո կազմվում է առաջիկա տարվա բյուջեի նախագիծը, որը ներկայացվում է ԱԺ: **ԱԺ-ի** կողմից ընդունվում է **օրենք** (սովորաբար նոյեմբեր-դեկտեմբեր ամսին) առաջիկա տարվա պետական բյուջեի մասին:


Պետական բյուջեի մասին օրենքը ԱԺ-ի կողմից հաստատվելուց հետո ԲԳԿ մարմինները **եռօրյա** ժամկետում ՀՀ ՖՆ են ներկայացնում պետական բյուջեով հաստատված հատկացումների **եռամսյակային բաշխվածությունը**: Տվյալները ամփոփելուց հետո ՀՀ ՖՆ Կառավարությանն է ներկայացնում եռամսյակային համամասնությունների վերաբերյալ տվյալները, որոնց հիման վրա ընդունվում է պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ Կառավարության որոշումը:

Ընթացիկ տարում հաստատված պետական բյուջեում փոփոխությունները իրականացվում են վերաբաշխումների միջոցով:

1.1.2 Պետական բյուջեի հիերարխիա

Յուրաքանչյուր տարի պետական բյուջեի նախագծի մշակման շրջանակում ՀՀ Վարչապետի որոշմամբ սահմանված ժամանակացույցի համաձայն, պետական մարմինները (ԲԳԿ) ՀՀ ՖՆ են ներկայացնում բյուջետային հայտերը (տես ենթագլուխ 1.1.3): Յուրաքանչյուր պետական մարմին իր բյուջետային ֆինանսավորման հայտը կազմում է իր ենթակայության և պատասխանատվության ներքո գտնվող այլ պետական մարմիններից ֆինանսական տեղեկատվությունների հավաքագրման և ամփոփման միջոցով, տես գծապատկերը 1.1:

³ Վերանայված հայտերի ներկայացման գործընթացը առավել մանրամասն ներկայացված է «ԲԱ10-Առաջիկա տարվա վերանայված հայտերի ստացում և հաստատում» բիզնես գործընթացում:



Գծապատկեր 1.1: Բյուջեի կազմման հիերարխիա

Ներկայացված գծապատկերի համաձայն՝ ԲԳԿ-ն բյուջետային ֆինանսավորման հայտ ձևավորելու համար տեղեկատվության ագրեգացում է իրականացնում ամենաստորին մակարդակից: Ամենաստորին մակարդակում կազմվում և վերադաս (ԲՍԿ) մարմինն են ներկայացնում պահանջվող տեղեկատվությունները: ԲՍԿ մարմինը ստացված տեղեկատվությունը ստուգում է և, բոլոր ստորադաս մակարդակների վերջնական հաստատված տվյալները ամփոփելով, ուղարկում է ԲԳԿ մարմին: Բոլոր ԲՍԿ-ներից ստացված տեղեկատվությունները ամփոփվում են համապատասխան ԲԳԿ մարմնի կողմից, և ձևավորում է վերջնական բյուջետային ֆինանսավորման հայտը, որը պատասխանատու անձի ստորագրությամբ ուղարկվում է ՀՀ ՖՆ⁴:

1.1.3 Բյուջետային ֆինանսավորման հայտ

Պետական մարմինների (ԲԳԿ) բյուջետային հայտերը ֆինանսական և ոչ ֆինանսական տվյալների համախումբ են, որոնք ներկայացվում են ՖՆ կողմից տրամադրված մեթոդական ցուցումներում առկա հավելվածների և ծախսակազմումների ձևանմուշների հիման վրա: Հարկ է նշել, որ մեթոդական ցուցումներում ներկայացվում են ինչպես ծախսային, այնպես էլ եկամտային ձևանմուշները:

Հայտում ներկայացվում են՝

Գոյություն ունեցող ծրագրեր/միջոցառումներ

⁴ ԲԳԿ բյուջետային ֆինանսավորման հայտի ձևավորման գործընթացը առավել մանրամասն նկարագրված է «ԲՄ16-ԲԳԿ մարմինների կողմից ՄԺԾԾ(ներառյալ առաջիկա տարվա բյուջե) հայտերի ձևավորում և ներկայացում ՀՀ ՖՆ» բիզնես գործընթացում:

պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների գծով ինչպես առաջիկա տարվա ծախսերի հաշվարկները, այնպես էլ ՄԺԾԾ ժամանակահատվածի ծախսերի գնահատականները: Ընդ որում, **առաջիկա տարվա** համար տեղեկատվությունը ներկայացվում է մանրամասն, պետական բյուջեի շրջանակներում պետական մարմնի կողմից իրականացման ենթակա ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ մանրակրկիտ հաշվարկ-հիմնավորումների (ծախսակազմում) հետ միասին:

Նոր նախաձեռնություններ

Մեթոդական ցուցումներով սահմանված ձևանմուշների համաձայն՝ պետական մարմինները ներկայացնում են նաև նոր նախաձեռնությունները՝ հաշվարկ հիմնավորումներով:

Սույն տարվա մեթոդական ցուցումներով ՀՀ ՖՆ ներկայացման ենթակա են թվով **13 հավելվածներ**: Նշված հավելվածները դինամիկ են և, հաշվի առնելով հաջորդ բյուջետային գործընթացում պլանավորվող, ինչպես նաև ֆինանսական հետևանքներ առաջացնող փոփոխությունները, կարող են ձևափոխվել: Արդեն սահմանված հավելվածներին կարող են ավելանալ հավելվածների նոր ձևանմուշներ, կամ փոփոխություններ կատարվեն գոյություն ունեցողներում⁵:

Հավելվածներից յուրաքանչյուրը ունի իր ուրույն կառուցվածքը, որի միջոցով ներկայացվում են տվյալ պետական մարմնի ինչպես ֆինանսական, այնպես էլ արդյունքային ցուցանիշները: Բյուջետային հայտերի ձևավորման հիմքում դրված է ծրագրային բյուջետավորման (ՕԲ) սկզբունքը⁶, որը բյուջետավորման մի եղանակ, որի ժամանակ բյուջետային գործընթացը (ռազմավարական որոշումները, պլանավորումը, կատարումը, հաշվետվողականությունը և վերլուծությունները, աուդիտը) հիմնվում է բյուջեի շրջանակում իրականացվող ծրագրերի վրա:

Ծրագիր-միևնույն նպատակին հասնելուն ուղղված պետության քաղաքականության իրագործման **միջոցառումների** (ծրագրի միջոցառումներ) տրամաբանական խմբավորումն է, որը միտված է պետական բյուջեի ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Ծրագրերի հիման վրա բյուջեի կազմումը պարտադրում է, ի լրումն զուտ ֆինանսական մանրակրկիտ տեղեկատվության, բյուջեում ներառել նաև ծրագրային տեղեկատվություն: Այն է՝ բյուջեում պետք է նաև հստակ նշվեն այն նպատակները և արդյունքները, որոնք նախատեսված են որևէ ոլորտային ռազմավարության իրականացման համար:

⁵ Հավելվածների առավել մանրամասն նկարագրությունը բերված է «ԲՄ1-ՄԺԾԾ (այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի) կազմման մեթոդական ցուցումների մշակում և տրամադրում հայտատու մարմիններին» բիզնես գործընթացում:

⁶ 2013 թվականին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով առաջին անգամ ամրագրվեց և պարտադիր դարձավ Հայաստանում «ծրագրային բյուջետավորման» իրականացումը:

Միջոցառումներ–ծրագրի շրջանակներում պետության քաղաքականության իրագործման նպատակով իրականացվող պետության միջամտություններն են, որոնք հատկապես ուղղված են տվյալ ծրագրի համար սահմանված նպատակի իրագործմանը:

Յուրաքանչյուր ԲԳԿ իր բյուջետային հայտը ՀՀ ՖՆ կարող է ներկայացնել մեկ կամ ավել քանակի ծրագրերի շրջանակում: Մինևույն ծրագիրը չի կարող իրականացվել մի քանի ԲԳԿ-ների կողմից: Ծրագրի իրագործման և դրա արդյունքների սահմանման համար պատասխանատու է միայն մեկ ԲԳԿ: Ծրագրերը իրենց հերթին ներառում են մեկ և ավել քանակի միջոցառումներ, մինևույն միջոցառումը չի կարող ընդգրկված լինել այլ ծրագրի շրջանակներում: Մեկ միջոցառման իրականացնող կարող են լինել մեկից ավել ԲՄԿ-ներ:

Միջոցառումները կարող են ընդգրկել մեկ և ավել քանակի **տնտեսագիտական հոդվածներ**⁷: Յուրաքանչյուր տնտեսագիտական հոդված իրենից ենթադրում է թվային հաշվարկ, որը ներկայացվում է համապատասխան ծախսակազմումների միջոցով: Մինևույն տնտեսագիտական հոդվածները կարող են կիրառվել տարբեր միջոցառումների շրջանակում (բացառություն են կազմում գաղտնի հոդվածները, որոնք չեն ցուցադրվում):

Միջոցառման բնույթից և ոլորտից կախված **ծախսակազմման ձևերը** տարբեր են, և չկա ծախսերի հաշվարկների ներկայացման միասնական մոտեցում: Բացառություն են կազմում պետական մարմինների պահպանման ծախսակազմման ձևանմուշները, որոնք առավելապես համակարգված են և կարգավորվում են որոշակի նորմերով:

Սահմանված ժամանակացույցի համաձայն՝ բոլոր ԲԳԿ-ները իրենց բյուջետային հայտերը **Mulberry** համակարգի միջոցով ներկայացնում են ՀՀ ՖՆ Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն /ԲԳԿՎ/:

Վարչության համապատասխան աշխատակիցների կողմից իրականացվում է ստացված հայտերի ստուգում և համաձայնեցված տվյալների ամփոփում⁸: Ներկայացված տվյալները նախորդ տարվա փաստացի տվյալների հետ համադրելու համար աշխատակիցները օգտվում են **LS Finace** համակարգից:

Տվյալները ամփոփվում են համապատասխան ձևով կառուցված xls ֆորմատի տարբեր աշխատանքային փաստաթղթերում, որոնք ներմուծվում են **LS Budget**:

Պահանջվող բոլոր տվյալները մուտքագրելուց հետո, ձևավորվում են էլքային ամփոփ հավելվածները, որոնք ենթակա են լինում արտահանման, մասնավորապես՝

ՄԺԾԾ հավելվածներ⁹,

առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հավելվածներ¹⁰,

⁷ Տնտեսագիտական և գործառական հոդվածները սահմանված են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 5-Ն հրամանով:

⁸ Վարչության կողմից հայտերի ստացման և ամփոփման մանրամասները նկարագրված են ԲՄ1-ԲՄ16, ԲՄ1-ԲՄ12 և ԲԵ1-ԲԵ11 բիզնես գործընթացներում:

⁹ հավելվածների նկարագրությունը ներկայացված է «ԲՄ13-ՄԺԾԾ հավելվածների ձևավորում» բիզնես գործընթացում:

¹⁰ հավելվածների նկարագրությունը ներկայացված է «ԲՄ13-ՄԺԾԾ հավելվածների ձևավորում» բիզնես գործընթացում:

ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի հավելվածներ¹¹,


ՀՀ Կառավարության բյուջետային ուղերձ-բացատրագրի հավելվածներ¹²,

ՀՀ պետական բյուջեի կատարումը ապահովող միջոցառումների մասին որոշման հավելվածներ (ծախսերի եռամսյակային համամասնությունների)¹³:

Հավելվածները համակարգից արտահանվում են xls ձևաչափով: Հարկ է նշել, որ ոչ բոլոր հավելվածներ են արտահանվում համակարգից, որոշ հավելվածները պատրաստվում են համապատասխան աշխատակիցների կողմից ձեռքով:

1.1.4 Դերակատարներ

Քանի որ բյուջեի կազմման գործընթացը բազմամակարդակ է, հետևաբար ներգրավված դերակատարները նույնպես տարբեր են: Յուրաքանչյուր դերակատար տարբեր մակարդակներում օժտված է լինում տարբեր լիազորություններով և պատասխանատվությամբ: Ստորև բերված գծապատկերում ներկայացված են բյուջետային ֆինասավորման հայտի ձևավորման մասնակից դերակատարները:



Գծապատկեր 1.3 Բյուջեի կազմման գործընթացում ընդգրկված դերակատարներ

¹¹ հավելվածների նկարագրությունը ներկայացված է «ԲԱ12-առաջիկա տարվա հավելվածների ձևավորում» բիզնես գործընթացում:


¹² հավելվածների նկարագրությունը ներկայացված է «ԲԱ12-առաջիկա տարվա հավելվածների ձևավորում» բիզնես գործընթացում:

¹³ հավելվածների նկարագրությունը ներկայացված է «ԲԵ10-եռամսյակային համամասնությունների հավելվածների ձևավորում» բիզնես գործընթացում:

ԲԳԿ(բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ) բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգմամբ նախատեսված պետական կառավարչական մարմիններն են, որոնք հանդիսանում են բյուջետային հայտի ձևավորման և ծրագրերի իրականացման պատասխանատուն: Այս պահի դրությամբ բյուջետային հայտեր ներկայացնում են թվով 47 ԲԳԿ մարմիններ:

ԲՄԿ(բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչ) այն պետական կառավարչական մարմիններն են, որոնք իրականացնում են լիազորություններով իրենց վերապահված միջոցառումների իրականացումը: ԲԳԿ-ն միջոցառում իրականացնելիս հանդես է գալիս որպես ԲՄԿ, հետևաբար ԲԳԿ-ն և ԲՄԿ-ն նույնականացված են, և հաշվարկվում է թվով 47 ԲՄԿ ևս:

ՊԿ (Պետական կազմակերպություններ) պետական կառավարչական մարմին չհանդիսացող այն պետական կազմակերպություններն են, որոնք իրենց գործունեությունը իրականացնելու համար ֆինանսավորվում են պետական բյուջեից: Պետական կազմակերպությունների թվին են դասվում Պետական ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ), հասարակական կազմակերպությունները(ՀԿ), հիմնադրամները և այլն:



Գծապատկեր 1.4 Դերակատարների կապը ծրագիր-միջոցառման հետ

Միննույն ծրագրի շրջանակում կարող են ընդգրկված լինել բնույթով տարբեր միջոցառումներ, որոնց իրականացնողներ կարող են սահմանվել այլ պետական կառավարչական մարմիններ (ԲՄԿ):

Միննույն միջոցառման իրականացնող կարող են լինել մեկ և ավել ԲՄԿ-ներ, օրինակ ԿԳՄՄՆ-ի «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն»

ծրագրի «Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» միջոցառման կատարողներ են հանդիսանում ԿԳՄՄՆ, ԱԻՆ-ը և ՀՀ Կառավարությանը առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը: Ինչպես նաև միննույն ԲՄԿ-ն կարող է հանդիսանալ տարբեր միջոցառումների իրականացնող, օրինակ Քաղաքաշինության կոմիտեն ԲՄԿ է ինչպես ԿԳՄՄՆ «Հանրակրթության ծրագիր» ծրագրի «Մոդուլային» տիպի մանկապարտեզների շենքային ապահովում միջոցառման, այնպես էլ Ազգային ժողովի «Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովման» ծրագրի «ՀՀ Ազգային ժողովի շենքային պայմանների բարելավում» միջոցառման:

1.1.5 Համայնքների բյուջե

Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությունը, ԲԳԿ-ներին տրամադրվող մեթոդական ցուցումներից բացի, կազմում է նաև պարտադիր բնույթի մեթոդական ցուցումներ և խորհրդատվական բնույթի ուղեցույցներ՝ համայնքների բյուջեների նախագծերի մշակման համար: Մեթոդական ցուցումները ՀՀ ՖՆ ԲԳԿՎ կողմից տրամադրվում են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ ՏԻՄ-երին տրամադրելու համար¹⁴:

Իրականացվում է նաև պետական բյուջեից ՀՀ բոլոր համայնքներին ֆինանսական **համահարթեցման** սկզբունքով տվյալ տարում տրամադրվող **դոտացիաների ընդհանուր գումարի** հաշվարկը ՏԿԵՆ-ին տրամադրելու համար:

ԲԳԿՎ աշխատակցի կողմից նաև իրականացվում է **համայնք ծրագրի** միջոցով եկամուտներից նվազեցվող կորուստների հաշվարկը և ըստ համայնքների բացվածքի՝ տրամադրվում է ՏԿԵՆ-ին համայնքներին տրամադրելու համար: Հաշվարկված կորուստների ընդհանուր թիվը մուտքագրվում է LS Budget.

Եզրակացություն

Նկարագրված ծախսակազմման ներկա բիզնես գործընթացները իրականացվում են առավելապես թղթային տարբերակով: Չկա մեկ միասնական համակարգ, որը հնարավորություն կտա գործընթացի ամբողջ շղթան իրականացնել ավտոմատ եղանակով:

Բյուջետավորման իրականացման գործընթացներում կիրառվում են ստորև ներկայացված էլեկտրոնային համակարգերը.

Mulberry – փաստաթղթաշրջանառություն տարբեր գործընթացներում

LS Finance – գանձապետական էլեկտրոնային շտեմարան

LS Budget -

Տարբեր գործընթացներում կամ դրանց տարբեր քայլերում տարբեր գործիքների կիրառությունը բերում է գործընթացների ոչ օպտիմալ կազմակերպման, ինչպես նաև տվյալների ոչ կենտրոնացված մշակման: Սրանք էլ իրենց հերթին կարող են առաջացնել

¹⁴ Գործընթացը առավել մանրամասն նկարագրված է «ԲՄ1.1-Համայնքների բյուջեների նախագծերի կազմման մեթոդական ցուցումների մշակում և տրամադրում» բիզնես գործընթացում:

աշխատանքային գործընթացների խափանումներ, զգայուն տվյալների ոչ անվտանգ կիրառություն, տվյալների անհամատեղելիություն և այլն:

Բացի այդ, ծախսակազմման ժամանակ ենթադրվում է այնպիսի տվյալների ստեղծվում, որը ամբողջությամբ կիրառելի է այլ մոդուլների կողմից ևս: Քանի որ այժմ չկա մեկ միասնական համակարգ, անհրաժեշտություն է առաջանում միևնույն տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ստեղծել մի քանի անգամ: Օրինակ՝ գնումների պլանը կամ բյուջեի պլանը (նախահաշիվներ), որոնք ուղիղ հետևանքն են կազմվող բյուջեի, ստեղծվում են բյուջեի ծախսակազմումից առանձին: Սա բերում է նրան, որ միևնույն տեղեկատվությունը ստեղծվում է մի քանի տեղ և առաջացնում է լրացուցիչ ստուգումներ կատարելու անհրաժեշտություն՝ դարձնելով գործընթացը աշխատատար և ոչ արդյունավետ:

Գործընթացների օպտիմալացման համար կարևոր է ԿՖԿՏՀ բյուջետավորման մոդուլի (որպես էլեկտրոնային համակարգ) ներդրումը, որը թույլ կտա.

Հնարավորինս կենտրոնացնել բյուջետավորման գործընթացների իրականացումը մեկ էլեկտրոնային համակարգի տիրույթում,

Մշակել և պահպանել տվյալները կենտրոնացված կարգով,

Կառավարել գործընթացների հաջորդականությունն ու կարգը,

Սահմանել համապատասխան գործարկողների լիազորություններ տվյալների և գործընթացների նկատմամբ:

1.2 Եկամտային մաս

ՀՀ ՖՆ կողմից ԲԳԿ մարմիններին տրամադրվող մեթոդական ցուցումներում նկարագրվում են նաև բյուջեի նախագծերի հիմքում դրվող բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակների և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումների իրականացման մոտեցումները:

Նշված մեթոդական ցուցումներին կից տրամադրվում են նաև xls աղյուսակային ձևաչափեր՝ եկամտատեսակների գծով փաստացի կամ կանխատեսումային ցուցանիշներ ներկայացնելու համար:

ԲԳԿ-ները ոչ հարկային եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփում և լրացնում են տրամադրված ձևանմուշներին համապատասխան: Պահանջվող փաստաթղթերը, ՀՀ Վարչապետի որոշման ժամանակացույցի համաձայն, տրամադրվում է ՀՀ ՖՆ ԲԳԿՎ՝ եկամտային կանխատեսումների համար:

Մասնավորապես ԲԳԿ-ները տեղեկատվություն են ներկայացնում ՀՀ ՖՆ

ա) **պետական տուրքերի** վերաբերյալ տվյալներ¹⁵,

բ) **պաշտոնական դրամաշնորհների** վերաբերյալ տվյալներ¹⁶.


¹⁵ Պետական տուրքերի ստացումը և ամփոփումը ներակայացված է ԲՄ5, ԲՄ5 և ԲԵ3 բիզնես գործընթացներում:

¹⁶ Պաշտոնական դրամաշնորհների ստացումը և ամփոփումը ներակայացված է ԲՄ15, ԲՄ11 և ԲԵ2 բիզնես գործընթացներում:

զ) այլ եկամուտների վերաբերյալ տվյալներ¹⁷,

դ) ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի վերաբերյալ տվյալներ¹⁸:

Տվյալների տրամադրման գործընթացը նկարագրված է Գծապատկեր 2.1-ում



Գծապատկեր 2.1 Ոչ հարկային եկամուտների ստացման հիերարխիա

Տրամադրված տեղեկատվությունը ՀՀ ՖՆ Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության աշխատակիցների կողմից ստուգվում, վերլուծվում և ամփոփվում է համապատասխան xls աշխատանքային փաստաթղթերում: Ներկայացված տվյալները նախորդ տարվա փաստացի տվյալների հետ համադրելու համար աշխատակիցները օգտվում են **LS Finance** համակարգից:

Ամփոփված տվյալները **ոչ հարկային եկամուտների** վերաբերյալ կանխատեսումներ անելու հիմք է: Կանխատեսված տվյալները տրամադրվում են մակրոտնտեսական քաղաքականության վարչությանը՝ մակրոտնտեսական ցուցանիշների և հարկաբյուջետային շրջանակի կանխատեսման համար: **Հարկային եկամուտների** վերաբերյալ տեղեկատվությունը մակրոտնտեսական քաղաքականության վարչությունը ստանում է Պետական եկամուտների կոմիտեից (ՊԵԿ)

Եզրակացություն

Ներկայումս ոչ հարկային եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունները ԲԳԿ մարմինների կողմից ստացվում են բացառապես Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգով: Արդյունքում ստացված տվյալները ամփոփվում են թղթային

¹⁷ Այլ եկամուտների ստացումը և ամփոփումը ներակայացված է ԲՄ3, ԲՄ3, ԲՄ1 բիզնես գործընթացներում:

¹⁸ Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի ստացումը և ամփոփումը ներակայացված է ԲՄ6, ԲՄ6, ԲԵ4 բիզնես գործընթացներում:

տարբերակով, ագրեգացվում են xls ֆայլերի օգնությամբ և ագրեգացված տվյալները ձեռքով մուտքագրվում են LS Budget համակարգ: ՀՀ ՖՆ այլ վարչություններին տրամադրվող տեղեկատվությունը նույնպես իրականացվում է թղթային տարբերակով:

Գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման համար նպատակահարմար է ոչ հարկային եկամուտների հավաքագրման գործընթացը ևս ավտոմատացնել՝ հնարավորություն տալով տվյալների ստացման և ավտոմատ ագրեգացման:

1.3 Բյուջեի հաշվեկշռում (դեֆիցիտի հաշվեկշռում)

Բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը կազմում է բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը): Բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից:

Դեֆիցիտի հաշվեկշռման հաշվարկը իր մեջ պարունակում է և՛ մուտքային մաս, և՛ ելքային մաս:

Մուտքային մասը, ներքին և արտաքին աղբյուրներից ներգրավված ֆինանսական միջոցների վերաբերյալ տվյալներ են (դեֆիցիտի հաշվեկշռման աղյուսակում ցուցադրվում են + նշանով), օրինակ՝ թողարկված գանձապետական պարտատոմսեր, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքեր կամ արտաքին աղբյուրներից ստացված վարկեր և փոխատվություններ: Այս տվյալները չեն ներկայացվում ծրագիր-միջոցառումներով: Անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվում է ՀՀ ՖՆ համապատասխան վարչությունից:

Ելքային մասը (դեֆիցիտի հաշվեկշռման աղյուսակում ցուցադրվում է - նշանով) միշտ ներկայացվում է ծրագիր-միջոցառումներով, օրինակ՝ մուրհակների մարում, ստացված վարկերի և փոխատվությունների մարում, վարկերի և փոխատվությունների տրամադրում: Ելքային մասի տեղեկատվությունները տրամադրվում են ՀՀ ՖՆ համապատասխան վարչությունների կողմից:

Ստացված տեղեկատվությունների հիման վրա իրականացվում է բյուջեի դեֆիցիտի հաշվեկշռում¹⁹:

Ունենալով հաշվեկշռված **դեֆիցիտ**, նախատեսված **ծախսի (այդ թվում ելքերի)** և կանխատեսված **եկամտի** թվերը՝ իրականացվում է բյուջեի հաշվեկշռում: Բյուջեն միշտ պետք է լինի հաշվեկշռված՝ առաջնորդվելով հետևյալ բանաձևով՝

$$D = E + T$$

որտեղ **D**-նախատեսված **ծախսեր**, **E**-կանխատեսված **եկամուտներ**, **T**-**դեֆիցիտ**

¹⁹ Բյուջեի դեֆիցիտի հաշվեկշռման գործընթացը ներկայացված է ԲՄ9, ԲԱ9, ԲԵ8 բիզնես գործընթացներում:

Եզրակացություն

Ներկայումս, դեֆիցիտի հաշվեկշռման գործընթացը իրականացվում է հավաքագրված տեղեկատվությունների հիման վրա՝ բացառապես xls միջոցով: Բյուջեի հաշվեկշռման գործընթացի կազմակերպման համար բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունները առկա են տարբեր մոդուլների կամ ենթամոդուլների շրջանակում: Քանի որ չկա մեկ միասնական համակարգ, անհրաժեշտություն է առաջանում տարբեր աղբյուրներից հավաքագրել տվյալները և ձեռքով ամփոփել: Նշված գործընթացի կարևորությունը հաշվի առնելով՝ առաջարկվում է բյուջետավորման մոդուլում ստեղծել առանձին ենթամոդուլ՝ հաշվեկշռման գործընթացը առավել արագ, արդյունավետ և ճշգրիտ կազմակերպելու համար:

Գլուխ 2: Բյուջետավորման մոդուլի կառուցվածքային նկարագրություն

Բյուջետավորման մոդուլը նախատեսված է պետական մարմինների կողմից բյուջետային հայտերի կազմման, ինչպես նաև եկամուտների կանխատեսման, բյուջեի հաշվեկշռման և համայնքների հաստատված բյուջեների ստացման գործընթացները իրականացնելու համար:

Սույն գլխում ներկայացված է ԿՖԿՏՀ բյուջետավորման մոդուլի առաջարկվող մոդելի կառուցվածքի նկարագրությունը:


Բյուջեի մոդուլի **կառուցվածքում** ներկայացված է ԿՖԿՏՀ համակարգի շրջանակում բյուջետավորման մոդուլի կապը մյուս մոդուլների հետ՝ ցուցադրված UML կոմպոնենտային դիագրամով:

Բյուջետավորման մոդուլի ներդրումը պետք է իրականացնել հետևյալ սկզբունքներով.

Հնարավորինս թույլ կախվածություն ԿՖԿՏՀ մյուս մոդուլներից և արտաքին համակարգերից,


Հնարավորինս տվյալների վերակիրառություն, որը մշակվում են ԿՖԿՏՀ մյուս մոդուլներում կամ արտաքին համակարգերում,

Հնարավորինս պարզ և բավարար ֆունկցիոնալություն մեկ մոդուլի տիրույթում աշխատելու համար:



Նկար 2.1 Առաջարկվող Հյուրընկալման մոդուլի կոնցեպտի կառուցվածքային սխեմա

Նկար 2.2-ում ներկայացված է բյուջետավորման մոդուլի կոնցեպտի տվյալների հոսքը ներքին ենթամոդուլների, ԿՖԿՏՀ մյուս մոդուլների և արտաքին տվյալների միջև:



Նկար 2.2 Առաջարկվող Բյուջետավորման մոդուլի կոնցեպտի տվյալների հոսք

Հաջորդ ենթագլխներում ներկայացվում է առանձին փոխգործակցող մոդուլների, ենթամոդուլների, դրանցում դերակատարում ունեցողների նշանակությունը, ինչպես նաև տվյալները, որոնք փոխանակվում են վերջիններիս միջև:

2.1 Բյուջեի կազմում ենթամոդուլ

Բյուջեի կազմման ենթամոդուլի ներդրմամբ նախատեսվում է ավտոմատացնել մարմինների կողմից ՀՀ ՖՆ ներկայացվող բյուջետային հայտերի ձևավորման և վերաբաշխումների իրականացման ամբողջ գործընթացը (տվյալների ձևավորում, ստացում, հաստատում, ագրեգացում, վերաբաշխում) ամենաստորին մակարդակից մինչև ամենավերին մակարդակ: Հենց այս ենթամոդուլում են սկիզբ առնում մի շարք մոդուլներում կարևորագույն կիրառություն ունեցող տվյալները:

Մասնավորապես՝

Բյուջետային հայտերի միջոցով, մարմինների կողմից տրամադրվող ի թիվս այլ տեղեկատվությունների, կտրամադրվի նաև գնումների պլանը (Բ1.1), որը ավտոմատ կերպով հասանելի կլինի **գնումների մոդուլին**:

Գանձապետարան մոդուլին կտրամադրվեն հաստատված բյուջեի (ԲԳԿ, ԲՄԿ, ծրագիր, միջոցառում, հոդված) վերաբերյալ տվյալներ (Բ1.2): Ծախսային հաշիվների ավտոմատ գեներացման համար կտրամադրվի նոր նախաձեռնությունների ծրագիր-միջոցառման հերթական համարը (Բ1.5), ինչպես նաև բյուջեի կատարման ընթացքում վերաբաշխումների կամ սահմանաչափերի բացման արդյունքում իրականացված ցանկացած փոփոխություն (ճշտված բյուջե Բ1.3):

Պետական պարտքի մոդուլին կտրամադրվի մարմինների կողմից բյուջետային հայտերով ներկայացված նպատակային վարկերից և դրամաշնորհներից նախատեսվող ծախսերի չափը (Բ1.6):

Բյուջեի հաշվեկշռման ենթամոդուլին կտրամադրվեն ծախսերի վերաբերյալ թվերը (Բ1.2, Բ1.3), ինչպես նաև բյուջետային ելքերի (Բ1.4) վերաբերյալ տվյալները:

Բյուջետային հայտերի ձևավորման կարևորագույն աղբյուրներից մեկն է **Հանրային հատվածի հաշվապահության մոդուլի** կողմից տրամադրված տվյալները (Հ1)՝ առավել թափանցիկ և արժանահավատ տեղեկատվություններ ներկայացնելու համար:

Բյուջեի կազմման ենթամոդուլը նաև տվյալների փոխանակում է իրականացնելու **Անալիտիկ-հաշվետվողական մոդուլի** հետ (Բ5 և ԱՀ1):

2.2 Եկամուտների կանխատեսում ենթամոդուլ

Եկամուտների կանխատեսման ենթամոդուլով նախատեսվում է իրականացնել հանրային իշխանության մարմինների կողմից ոչ հարկային եկամուտների վերաբերյալ կանխատեսվող տվյալների հավաքագրումը, ինչպես նաև ՀՀ ՖՆ համապատասխան ստորաբաժանման կողմից կտրամադրվեն նաև հարկային եկամուտների կանխատեսման տվյալները:

Այս ենթամոդուլում ձևավորված ոչ հարկային եկամուտների(Բ2.1) և հարկային եկամուտների (Բ2.2) տվյալները կկիրառվեն **բյուջեի հաշվեկշռման ենթամոդուլում**:

Եկամուտների կանխատեսման ենթամոդուլը նաև տվյալների փոխանակում է իրականացնելու **Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլի** հետ:

2.3 Բյուջեի հաշվեկշռում (դեֆիցիտի հաշվեկշռում) ենթամոդուլ

Բյուջեի հաշվեկշռման (դեֆիցիտի հաշվեկշռման) ենթամոդուլի օգնությամբ նախատեսվում է իրականացնել բյուջեի հաշվեկշռում՝ հնարավորություն տալով ամենօրյա ռեժիմով իրականացնելու ստուգումներ և բացահայտելու անհամապատասխանությունները և դրանց պատճառները:

Այս ենթամոդուլի բնականոն գործունեության ապահովման համար իրականացվելու է տեղեկատվությունների ստացում ԿՏԿՏՏ մի քանի մոդուլներից և ենթամոդուլներից, մասնավորապես՝

Բյուջեի կազմման ենթամոդուլից բյուջեի հաշվեկշռման ենթամոդուլին տվյալներ կտրամադրվեն ինչպես ծախսերի վերաբերյալ (**Բ1.2, Բ1.3**), այնպես էլ բյուջետային ելքերի (**Բ1.4**) վերաբերյալ:

Եկամուտների կանխատեսման ենթամոդուլից կտրամադրվեն տվյալներ ոչ հարկային եկամուտների(**Բ2.1**) և հարկային եկամուտների (**Բ2.2**) վերաբերյալ:

Գանձապետարանի մոդուլից կստացվեն տարեսկզբի ազատ մնացորդների և կայունացման դեպոզիտային հաշվի վերաբերյալ տվյալներ (**Գ21**):

Պետական պարտքի մոդուլին կտրամադրվի բյուջեի դեֆիցիտի չափ վերաբերյալ տվյալներ (**Բ3**), իսկ նշված մոդուլից կստացվեն ներգրավվող միջոցների վերաբերյալ տվյալներ (**ՊՊ1**):

Բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլից տվյալներ կստացվեն տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի (ներքին և արտաքին) (**ԲՊ1**) վերաբերյալ:

Ինչպես նաև կիրականացվի տեղեկատվությունների փոխանակում **Անալիտիկ հաշվետվողական մոդուլների** միջև:

2.4 Համայնքների բյուջեի ենթամոդուլ

Համայնքների բյուջեի ենթամոդուլի ներդրման արդյունքում հնարավոր կլինի համակարգի միջոցով ստանալ համայնքների հաստատված բյուջեները ևս: Համակարգի ներդրման արդյունքում հնարավոր կլինի ստուգել միջբյուջետային փոխանցումները և ստանալ պետության մակարդակով համախմբված բյուջե:

Նշված ենթամոդուլը տվյալներ (**Բ4**) կտրամադրի Գանձապետարանի մոդուլին՝ անհրաժեշտ ստուգումներ իրականացնելու համար:

Նախատեսվում է իրականացնել նաև տվյալների փոխանակում **Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլի** հետ:

2.5 Գանձապետարանի մոդուլ

Գանձապետարանի մոդուլը նախատեսված է բյուջետային դասակարգմանը համապատասխան պետական բյուջեի եկամուտների հաշվառման, նախնական հսկողությամբ ծախսերի ֆինանսավորման և հաշվառման, պետական գանձապետական և արտաբյուջետային հաշիվների վարման և պետական ընդհանուր ռեսուրսների հետ գործառնությունների իրականացման համար:

2.6 Գնումների մոդուլ

Գնումների մոդուլը նախատեսված է գնումների պլանավորման, գնման գործընթացի իրականացման (կախված գնման ձևից), գնումների պայմանագրերի կառավարման, ինչպես նաև գնումների համակարգողների որակավորման շնորհման քննության անցկացման և վերապատրաստման համար:

2.7 Հանրային հատվածի հաշվապահության մոդուլ

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլը նախատեսված է ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների կենտրոնացված, մեկ միասնական բազայում հաշվապահական հաշվառման համար: Արդյունքում հնարավոր է դառնալու ձևավորել պետական մակարդակով համախմբված ֆինանսական, բյուջեի կատարողական և ԿՖՎ հաշվետվությունները: Հանրային հատվածի հաշվապահական մոդուլում իրականացվելու է նաև պայմանագրերի կառավարումը:

2.8 Պետական պարտքի և բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլներ

Պետական պարտքի մոդուլը նախատեսված է ՀՀ պետական պարտքի կառավարման համար:

Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլը նախատեսված է հասարակ և փոխանցելի մուրհակների տրամադրման, մարման, բյուջետային երաշխիքների, վարկերի, ենթավարկերի տրամադրման, դրանցով ծագած պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ հանդեպ ոչ ռեզիդենտների պարտքի կառավարման գործընթացների ապահովման համար:

2.9 Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ

ԿՖԿՏՀ-ում նախատեսվում է ներդնել Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ, որը կիրառելի կլինի ԿՖԿՏՀ բոլոր մոդուլների կողմից՝ անալիտիկ-հաշվետվողական գործառնությունները մեկ տիրույթում իրականացնելու համար²⁰:

²⁰ Մանրամասները ներկայացված են համապատասխան փաստաթղթում

Անալիտիկ-հաշվետվողական մոդուլը նախատեսվում է կիրառել նաև բյուջետավորման մոդուլում անալիտիկ գործառույթների համար: Այսինքն՝ բյուջետավորման մոդուլն իր կազմում չի պարունակում առանձին ենթամոդուլ՝ անալիտիկ գործառույթների համար, փոխարենը նմանատիպ գործառույթները ԲԳԿՎ աշխատակիցները կիրականացնեն Անալիտիկ-հաշվետվողական մոդուլում: Վերջինս թույլ կտա բյուջետավորման մոդուլի ներքին ենթամոդուլներում մշակված անալիտիկ տվյալները կենտրոնացնել և կիրառել տարբեր անալիտիկ-հաշվետվողական գործառույթներ իրականացնելիս: Բացի բյուջետավորման մոդուլի տվյալներից, անալիտիկ-հաշվետվողական մոդուլը կենտրոնացնելու է նաև ԿՖԿՏՀ մյուս մոդուլի անալիտիկ տվյալները, որոնք նույնպես կարող են կիրառվել ԲԳԿՎ աշխատակիցների կողմից համապատասխան լիազորության դեպքում:

Այս մոտեցումը թույլ է տալու ինչպես բյուջետավորման, այնպես էլ ԿՖԿՏՀ մյուս մոդուլներին իրականացնել հնարավորինս համապարփակ անալիտիկ-հաշվետվողական գործառույթներ: Այս մոդուլում են ձևավորվելու 1.1.3 ենթագլխում նշված հավելվածները:

ԿՖԿՏՀ-ում նախատեսվում է ներդնել Տեղեկատուների մոդուլ, որը կիրառելի կլինի ԿՖԿՏՀ բոլոր անհրաժեշտ մոդուլների կողմից՝ միասնական տիրույթում տվյալներից օգտվելու համար: Վերջինիս գործառույթները իրականացվելու են անալիտիկ-հաշվետվողական մոդուլում:

2.10 Փոխանակվող տվյալներ


Ինտերֆեյս	Տվյալներ	Տրամադրող մոդուլ/ենթամոդուլ	Կիրառող մոդուլ/ենթամոդուլ
Բ1	<p>Բյուջեի ծախսերի և ելքերի վերաբերյալ տվյալներ</p> <p>1 Գնումների պլան</p> <p>2 Հաստատված բյուջե (ԲԳԿ, ԲՄԿ, ծրագիր, միջոցառում, հոդված)</p> <p>3 Ճշտված բյուջե</p> <p>4 Բյուջետային ելքեր</p> <p>5 Նոր ծրագիր/միջոցառման հերթական համարի տրամադրում</p> <p>6 Նպատակային վարկերից և դրամաշնորհներից կանխատեսվող ծախսեր</p>	Բյուջետավորում/Բյուջեի կազմում	<p>1 Գնումներ</p> <p>2 Գանձապետարան, Բյուջետավորում/Բյուջեի հաշվեկշռում</p> <p>3 Գանձապետարան, Բյուջետավորում/Բյուջեի հաշվեկշռում</p> <p>4 Բյուջետավորում/Բյուջեի հաշվեկշռում</p> <p>5 Գանձապետարան</p> <p>6 ՊՊ և ԲՆՊԿ մոդուլներ</p>
Բ2	<p>Եկամուտների վերաբերյալ տվյալներ</p> <p>1 Ոչ հարկային եկամուտների կանխատեսում</p> <p>2 Հարկային եկամուտների կանխատեսում</p>	Բյուջետավորում/Եկամտի կանխատեսում	Բյուջետավորում/Բյուջեի հաշվեկշռում
Բ3	Բյուջեի դեֆիցիտային մաս	Բյուջետավորում/Բյուջեի հաշվեկշռում	Պետական Պարտք
Բ4	Համայնքներից հաստատված/ճշտված բյուջե	Բյուջետավորում/Համայնքային բյուջե	Գանձապետարան
Բ5	<i>Բոլոր ենթամոդուլներից՝ անալիտիկ տվյալներ</i>	Բյուջետավորում/Բոլոր ենթամոդուլներ	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ
Հ1	Հաշվառված տվյալներ	Հանրային Հաստվածի Հաշվապահություն	Բյուջետավորում/Բյուջեի կազմում
ԳԶ1	Կայունացման հաշվի մնացորդ, տարեսկզբի ազատ մնացորդ	Գանձապետարան	Բյուջետավորում/Բյուջեի հաշվեկշռում

ՊՊ1	Ներգրավվող միջոցներ, դրանց մարումներ և սպասարկումներ	Պետական Պարտք	Բյուջետավորում/Բյուջեի հաշվեկշռում
ԲՊ1	Տրամադրված մուրհակների, վարկերի և պարտքերի, բյուջետային երաշխիքների վերաբերյալ տվյալներ	Բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլ	Բյուջետավորում/Բյուջեի հաշվեկշռում
ԱՀ1	Բոլոր մոդուլներում մշակված անալիտիկ տվյալներ 1 Հարկաբյուջետային շրջանակ	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ	Բյուջետավորում/ <i>Անհրաժեշտ ենթամոդուլներ</i> Բյուջեի կազմում ենթամոդուլ, Բյուջեի հաշվեկշռման ենթամոդուլ

Գլուխ 3: Բյուջետավորման մոդուլի ֆունկցիոնալ նկարագրություն

Սույն գլխում ներկայացված են բյուջետավորման մոդուլի ֆունկցիոնալ նկարագրությունները: Մանրամասն ներկայացված են ինչպես բյուջետավորման ենթամոդուլների միջև կապը, այնպես էլ բյուջետավորման մոդուլի և ԿՖԿՏՀ մյուս մոդուլների կապը, փոխանակվող տվյալները և ակնկալվող արդյունքները, այն գործընթացները, որոնք իրականացվելու են բյուջետավորման մոդուլում համակարգի ներդրումից հետո:

3.1 Չափաքանակների սահմանում



Նպատակ	Բյուջետային հայտերի ներկայացման համար կողմնորոշիչ չափաքանակների սահմանում ըստ մակարդակների:
Նկարագրություն/ ընթացք	<p>Կատարելով անհրաժեշտ վերլուծությունները՝ անալիտիկ ենթամոդուլում ՄՔՎ կողմից նախանշվելու է առաջիկա տարվա հարկաբյուջետային շրջանակը՝ սահմանելով ծախսի, եկամտի և դեֆիցիտի մեծությունները:</p> <p>Հիմք ընդունելով սահմանված ծախսի մեծությունը՝ հաշվարկվելու են կողմնորոշիչ չափաքանակները՝ ըստ յուրաքանչյուր ԲԳԿ-ի: Հաշվարկված տվյալները Վարչապետի մոտ համաձայնեցվելուց հետո մուտքագրվելու են համակարգ: Նշված չափաքանակները կրելու են ուղղորդող բնույթ և չեն ունենալու կոշտ սահմանափակումներ: Չափաքանակից ավել բյուջետային հայտ ներկայացնելու դեպքում համակարգը ցույց է տալու հաղորդագրություն՝ չափաքանակը գերազանցելու վերաբերյալ, և տեղեկություն՝ գերազանցող գումարի մեծության վերաբերյալ:</p> <p>Համակարգը հսկողություն է իրականացնելու, որպեսզի ԲԳԿ մարմինների վրա սահմանված չափաքանակները չգերազանցեն հարկաբյուջետային շրջանակով սահմանված ծախսի շրջանակը:</p> <p>Համակարգը թույլ է տալու չափաքանակներ սահմանել բյուջեի կազմման ցանկացած մակարդակում՝ ՀՀ ՖՆ կողմից ԲԳԿ-ների համար, ԲԳԿ-ների կողմից ԲՄԿ-ների համար և այլն: Համակարգով հնարավոր է լինելու տեսնել յուրաքանչյուր մակարդակում կողմնորոշիչ չափաքանակները առավել ճշգրիտ բյուջետային հայտ կազմելու համար:</p>
Հղում առկա գործընթացին	ԲՄՁ-Առաջիկա տարիների բյուջեներից հատկացումների նախնական կողմնորոշիչ չափաքանակների հաշվարկում և ներկայացում ԲԳԿ մարմիններին
Տիրույթ	Անալիտիկ մոդուլ, Բյուջեի կազմման ենթամոդուլ
Դերակատարներ	ՀՀ ՖՆ, ԲԳԿ
Մուտքային տվյալներ	ԱՀ1.1
Ելքային տվյալներ	

3.2 Բյուջեի կազմում

Բյուջետավորման մոդուլի բյուջեի կազմման ենթամոդուլը նախատեսված է իրականացնելու բյուջետային հայտերի ձևավորման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրումը, համախմբումը և ՀՀ ՖՆ ներկայացումը ամենաստորին մակարդակից մինչև ամենավերին: Հիմք ընդունելով ներկայումս բյուջեի կազմման համար իրականացվող գործընթացները(գործընթացը առավել մանրամասն նկարագրված է սույն փաստաթղթի Գլուխ 1-ում)՝ տարանջատել ենք 4 մակարդակ, մասնավորապես՝


1-ին մակարդակ-ՀՀ ՖՆ

2-րդ մակարդակ-ԲԳԿ


3-րդ մակարդակ-ԲՄԿ

4-րդ մակարդակ-ՊԿ(Պետական կազմակերպություններ՝ մասնավորապես ՊՈԱԿ-ներ):

Յուրաքանչյուր մակարդակում իրականացվող գործընթացների, լիազորությունների և օգտատերերի վերաբերյալ մանրամասները ներկայացված են ստորև: Հարկ է նշել, որ համակարգում, ըստ անհրաժեշտության, կարող են սահմանվել ցանկացած քանակի մակարդակներ՝ սահմանելով լիազորություններ և օգտատերերի շրջանակ: Օգտատերերի լիազորությունները և պարտավորությունները սահմանվելու և կարգավորվելու են օգտվողների կառավարման մոդուլում:




3.2.1 Տվյալների մուտքագրում՝ 4-րդ մակարդակ



Նպատակ	4-րդ մակարդակում իրականացվող գործընթացների և մասնակիցների լիազորությունների սահմանում
--------	---

Նկարագրություն/ ընթացք	<p>Համակարգում 4-րդ մակարդակին վերապահված լիազորությունների շրջանակը տարածվելու է ՊՈԱԿ, Հիմնադրամ, ՀԿ) վրա: Այս մակարդակում, ըստ անհրաժեշտության, կարող են սահմանել ցանկացած քանակի օգտատերեր: Օգտատերերը կարող են լրացնել պահանջվող տվյալները և ուղարկել վերադաս մակարդակ: Վերադաս մակարդակում տվյալները կարող են կամ հաստատվել և ուղարկվել առաջ կամ մերժվել և ուղարկվել հետ՝ խմբագրման: Տվյալների ձևավորման համար նախատեսված է լինելու մի քանի տարբերակ, մասնավորապես՝</p> <p>մարմինները հնարավորության դեպքում օգտվելու են Հանրային հատվածի հաշվապահության մոդուլում հաշվառված տվյալներից:</p> <p>Այլ համակարգերի հետ ինտեգրման հնարավորության դեպքում տվյալները API միջոցով մուտքագրվելու են համակարգ՝ նախատեսվող հաշվարկներ իրականացնելու համար:</p> <p>Տվյալները մարմինների կողմից համակարգ մուտքագրվելու են ձեռքով:</p> <p>Այս մակարդակում տարանջատվելու են 2 տիպի պետական մարմիններ՝</p> <p>Մարմիններ, որոնք մուտքագրելու են իրենց տվյալները՝ բացված ըստ հողվածների, ներկայացված համապատասխան ծախսակազմման հիմնավորումներով (օրինակ՝ Սևան ԱՊ՝ ՊՈԱԿ):</p> <p>Մարմիններ, որոնք մուտքագրելու են ելակետային տվյալներ՝ իրենց հասանելի գումարի չափը որոշելու համար (Օրինակ՝ դպրոցները մուտքագրելու են դասարանների քանակ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ պետական բյուջեից ֆինանսավորման չափը հաշվարկելու համար:</p> <p>Այս մակարդակում պետական մարմինները նշելու են նաև իրենց ծրագիրը և միջոցառումը, որի շրջանակում իրականացվելու է ծախսերի կատարումը:</p>
Հղում առկա գործընթացին	
Տիրույթ	Հանրային հատվածի հաշվապահության մոդուլ, Բյուջեի կազմում ենթամոդուլ
Դերակատարներ	ՊՈԱԿ (լրացնող, հաստատող), ԲՄԿ
Մուտքային տվյալներ	Հ1
Ելքային տվյալներ	

3.2.2 Բյուջեի հայտի կազմում 3-րդ մակարդակ



Նպատակ	3-րդ մակարդակում իրականացվող գործընթացների և մասնակիցների լիազորությունների սահմանում
Նկարագրություն/ ընթացք	<p>Այս մակարդակում իրականացվելու են ԲՄԿ-ին (բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչները) բնորոշ լիազորությունները և պարտականությունները:</p> <p>Այս մակարդակին հասանելիություն ունենալու են միայն հանրային իշխանության մարմինները (գերատեսչություններ, մարզպետարաններ, նախարարություններ): Համակարգում, ըստ անհրաժեշտության, կարող են սահմանվել ցանկացած քանակի օգտատերեր, որոնց լիազորությունները կսահմանվեն օգտատերերի կառավարման մոդուլում:</p> <p>Այս մակարդակում են հավաքվելու 4-րդ մակարդակից ստացված տվյալները, որոնք ստուգվելու են համապատասխան լիազորություն ունեցող օգտատիրոջ կողմից: Համակարգը հնարավորություն է տալու տեսնելու նաև ներկայացված տվյալների նախորդ տարիների փաստացի կատարված ֆինանսական ցուցանիշները (ծրագիր, միջոցառում, հողված) ևս՝ համեմատություններ, վերլուծություններ և համապատասխան որոշումներ կայացնելու համար: Անճշտությունների դեպքում</p>

ներկայացված տվյալները չեն հաստատվելու և հետ են ուղարկվելու 4-րդ մակարդակ՝ խմբագրման: Վերջնական հաստատում ստացած հավաքագրված տվյալները ենթակա են լինելու հաջորդ մակարդակ (2-րդ մակարդակ) ուղարկելու:

Այս մակարդակում մարմինը իրականացնելու է նաև իրեն վերաբերող միջոցառումների ծախսակազմումը: Ծախսակազմման տվյալների ձևավորումը կիրականացվի հետևյալ տարբերակներով՝

տվյալները կստացվեն Հանրային հատվածի հաշվապահության մոդուլում հաշվառված տեղեկատվությունից:

Այլ համակարգերի հետ ինտեգրման հնարավորության դեպքում տվյալները API միջոցով կմուտքագրվեն համակարգ:

Տվյալները մարմինների կողմից համակարգ կմուտքագրվեն ձեռքով:

Համապատասխան լիազորությամբ օժտված օգտատերը, օգտվելով ծախսակազմման տվյալներից, կկազմի ԲՄԿ-ի բյուջեի հայտը՝ իրեն հասանելի ցանկից ընտրելով տվյալ ծախսակազմման համար նախատեսված ծրագիրը, միջոցառումը և հոդվածը (ծրագիր, միջոցառում, հոդված կապը առավել մանրամասն ներկայացված է սույն փաստաթղթի 1.1.3 ենթագլխում): Յուրաքանչյուր հոդված ընտրելիս մարմինը կներակայացնի տվյալ հոդվածով նախատեսված գումարի հիմնավորումները՝ թվաբանական հաշվարկների տեսքով: Այսինքն, այն հոդվածները, որոնք գնում են պարունակում, տվյալները կարող են ներկայացնել 2 տարբերակով՝

համակարգը հնարավորություն է տալու բյուջեի կազմման հենց սկզբում մուտքագրել **գնումների** նախնական **պլանը**՝ նշելով ԳՄԱ կողը, գնման առարկան, չափման միավորը, միավորի գինը և գնման ձևը: Համակարգում կիրառվելու են որոշ սահմանափակումներ՝ կախված ընտրված տնտեսագիտական հոդվածից, համակարգը առաջարկելու է տվյալ հոդվածին բնորոշ **երրորդ մակարդակի** ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ցանկը, սակայն համակարգ մուտքագրվելու է **չորրորդ մակարդակի** անվանացանկի բացվածքին համապատասխան:

Այն դեպքերում, երբ բյուջետային հայտերի ներկայացման նախնական փուլում հնարավոր չի լինի ներկայացնել գնումների նախնական պլան, համակարգը կթույլատրի բյուջեի հայտերը ներկայացնել նաև հոդվածի մակարդակով, հետագայում գնումների պլանի ներկայացման հնարավորությամբ:

Այն հողվածները, որոնք գնում չեն պարունակում, տվյալները կներկայացվեն տվյալ հողվածի ծախսակագմանը բնորոշ թվաբանական արտահայտությամբ:

Բյուջեի հայտը, բացի ֆինանսական ցուցանիշներից, իր մեջ ներառում է նաև ոչ ֆինանսական ցուցանիշներ: Համակարգում միջոցառումների մակարդակում կմուտքագրվեն ոչ ֆինանսական ցուցանիշների կանխատեսումները (**արդյունքային ցուցանիշներ**): Մատուցվող ծառայությունների կամ տրամադրվող ապրանքների առանձնահատկություններից ելնելով՝ առանձնացվում են 4 հիմնական տեսակներ՝ քանակը և ծավալը (քանակի ցուցանիշներ), ծածկույթ (ընդհանուրի որ մասն է “ծածկվում” կամ բավարարվում ծառայության տրամադրվող ծավալների դեպքում), (այդ տիպի ցուցանիշները կարելի է դիտարկել որպես քանակի տարատեսակ), որակը (որակի ցուցանիշներ) և ժամկետները կամ պատեհաժամ լինելը (ժամկետի ցուցանիշներ): Փաստացի իրականացված արդյունքային ցուցանիշները նույնպես մուտքագրվելու են այս ենթամոդուլում: Այսպիսով, սահմանում ենք, որ արդյունքային ցուցանիշների սկզբնաղբյուրը հանդիսանալու է բյուջեի կազմման ենթամոդուլը, որտեղ պետք է գրանցվեն ինչպես կանխատեսվող, այնպես էլ փաստացի իրականացված ցուցանիշները՝ հնարավորություն տալով իրականացնել ճշգրիտ և արժանահավատ վերլուծություններ:


Այս մակարդակում է իրականացվելու նաև միջոցառումների **նշագրումը (tagging)**: Նշագրման նպատակն է տարանջատել (առանձնացնել) որոշակի նպատակներին, թիրախներին կամ արդյունքներին նպատակաուղղված տվյալները: Օրինակ՝ համակարգի օգնությամբ միջոցառումների մակարդակում, նշագրում իրականացնելով՝ հնարավոր կլինի տարանջատել Կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) առնչվող ոլորտները, ինչպիսիք են կլիմայական, գենդերային հավասարության, աղքատության վերացման և այլ ոլորտներ:

Համակարգը հնարավորություն է տալու բյուջետային հայտերը, բացի տարեկան և եռամսյակային բաշխվածության, ներկայացնելու նաև ամսական և շաբաթական (ցանկության դեպքում նաև օրական) բաշխվածությամբ: Համակարգում սահմանվելու է հսկում, համաձայն որի՝ եռամսյակային համամասնությունների թիվը չի կարող գերազանցել հաստատված պետական բյուջեի թիվը: Ինչպես նաև ստուգվելու են ամսական կտրվածքով ներկայացվող նախահաշիվները

<p>Հղում անկա գործընթացին</p>	<p>չգերազանցումը հաստատված եռամսյակային համամասնություններին:</p> <p>Ներկայացնելով ամսական բաշխվածությամբ հայտերը՝ հնարավոր կլինի ավտոմատ գեներացնել մարմինների նախահաշիվները և վճարման ժամանակացույցը: Արդյունքում, այլևս հարկ չի լինի նախահաշիվ մուտքագրել գանձապետարանում, քանի որ բյուջեի կազմման մոդուլում ձևավորված նախահաշիվների տվյալները ավտոմատ հասանելի կլինեն գանձապետարանի մոդուլին:</p> <p>ՊԲ կատարումը ապահովող եռամսյակային համամասնությունների հաստատումից հետո մարմինները կներկայացնեն վճարման ժամանակացույցը շաբաթական կտրվածքով: Համակարգը հսկում կսահմանի ներկայացված շաբաթական ժամանակացույցով պահանջվող գումարների վրա՝ թույլ չտալով ներկայացվող գումարից ավել ֆինասավորում ստանալ: Համակարգը նաև հսկում կսահմանի տվյալ եռամսյակում պլանավորված գումարների վրա: Հաշվետու եռամսյակի կտրվածքով բյուջեի թերակատարում ունենալու դեպքում համակարգը եռամսյակի ավարտից մեկ շաբաթ շուտ զգուշացում կուղարկի մարմնին: Մարմինը հնարաորություն կունենա հիմնավորելու՝ պահանջված գումարի ծախսը իրականացրելը: Հիմնավորումը ՀՀ ՖՆ կողմից ընդունելի լինելու դեպքում կտեղափոխվի հաջորդ եռամսյակ: Եթե նախազգուշացումից հետո մարմինը չարձագանքի զգուշացմանը, կամ ՀՀ ՖՆ կողմից հիմնավորումը ընդունելի չլինի, պլանավորված գումարը ավտոմատ կտեղափոխվի պահուստային ֆոնդի հաշվին:</p> <p>Ինչպես գիտենք, ԲՄԿ-ից ներքև հիմնարկների(4-րդ մակարդակ) համար բյուջեն հաստատվում է 1 հոդվածով՝ կամ սուբսիդիա հոդված կամ դրամաշնորհ հոդված: 3.2.1 ենթագլխում նկարագրված 1-ին տիպի մարմինների նախահաշիվները (անհրաժեշտ տվյալները լրացնելու դեպքում) կգեներացվեն ինքնաշխատ կերպով: 2-րդ տիպի մարմինների դեպքում բյուջեի հաստատումից հետո մարմինները իրենց նախահաշիվները և ժամանակացույցը կմուտքագրեն բյուջեի կազմման ենթամոդուլ:</p> <p>Այսպիսով, քանի որ նախահաշիվների համար անհրաժեշտ բոլոր տվյալների ստացման հնարավորությունը տրամադրվելու է բյուջեի կազմման ենթամոդուլում, այսուհետ բոլոր նախահաշիվները կստեղծվեն հենց այս ենթամոդուլում:</p>
-------------------------------	--

Տիրույթ	Հանրային հատվածի հաշվապահության մոդուլ, Բյուջեի կազմում ենթամոդուլ
Դերակատարներ	ՊԿ, ԲՄԿ (Մուտքագրող, ուղարկող), ԲԳԿ
Մուտքային տվյալներ	Հ1
Ելքային տվյալներ	Բ1


3.2.3 Բյուջեի հայտի կազմում 2-րդ մակարդակ



Նպատակ	2-րդ մակարդակում իրականացվող գործընթացների և մասնակիցների լիազորությունների սահմանում
--------	---

Նկարագրություն/ ընթացք	<p>Համակարգում 2-րդ մակարդակին վերապահվելու է ԲԳԿ (բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ) բնորոշ լիազորությունների շրջանակ: Այս մակարդակում իրականացվելու է բյուջետային հայտերի ամբողջականացման գործընթացը: 3-րդ մակարդակից ստացված տեղեկատվությունը ստուգվելու է համապատասխան լիազորությամբ օժտված օգտատիրոջ կողմից: Համակարգը հնարավորություն է տալու տեսնելու նաև ներկայացված տվյալների նախորդ տարիների փաստացի կատարված ֆինանսական ցուցանիշները (ծրագիր, միջոցառում, հոդված)՝ համեմատություններ, վերլուծություններ և որոշումներ կայացնելու համար: Անճշտությունների դեպքում տվյալները մերժվելու են՝ հետ ուղարկվելով 3-րդ մակարդակ՝ անհրաժեշտ ճշտումներ կատարելու համար: Նախորդ մակարդակներից ստացված տվյալների վերջնական հաստատումից հետո կձևավորվեն տվյալ ԲԳԿ պատասխանատվության տակ գտնվող ողջ ծրագրի վերջնական ֆինանսական տվյալները: Բացի ֆինանսական տվյալներից, ԲԳԿ-ն կսահմանի նաև տվյալ ծրագրի վերջնական արդյունքի ցուցանիշները (պետք է լինեն հստակ և չափելի ցուցանիշներ), թիրախային ժամկետները, ինչպես նաև կապը ՀՀ Կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ:</p> <p>Ինչպես և նախորդ մակարդակում, այստեղ նույնպես կկիրառվի նշագրում՝ ըստ անհրաժեշտ խմբավորման:</p> <p>Այն մարմինները, որոնք միջոցառման և՛ ԲԳԿ են, և՛ ԲՄԿ-ն, նրանց կտրվեն 2 մակարդակներին հասանելի (3-րդ և 2-րդ մակարդակների) լիազորություններ:</p> <p>Ավարտուն տեսքի բերված բյուջետային հայտերը համապատասխան լիազորությամբ օժտված օգտատիրոջ կողմից կուղարկվեն ՀՀ ՖՆ:</p> <p>Այս մակարդակում կներկայացվեն նաև բյուջետային ելքերի վերաբերյալ տվյալները՝ (ԲԳԿ, ծրագիր, միջոցառում, հոդված):</p>
Հղում առկա գործընթացին	
Տիրույթ	Բյուջեի կազմում ենթամոդուլ
Դերակատարներ	ԲՄԿ, ԲԳԿ, ՀՀ ՖՆ
Մուտքային տվյալներ	
Ելքային տվյալներ	


3.2.4 Բյուջեի հայտերի ստուգում և հաստատում՝ 1-ին մակարդակ



Նպատակ	1-ին մակարդակում իրականացվող գործընթացների և մասնակիցների լիազորությունների սահմանում
Նկարագրություն/ընթացք	<p>Համակարգում 1-ին մակարդակին վերապահվելու է ՀՀ ՖՆ ին բնորոշ լիազորությունների շրջանակ:</p> <p>Այս մակարդակում յուրաքանչյուր օգտատեր ստուգելու է իր պատասխանատվության տակ գտնվող ոլորտներից ստացված տեղեկատվությունները: Համակարգը հնարավորություն է կտա տեսնելու նաև ներկայացված տվյալների նախորդ տարիներին փաստացի կատարված ֆինանսական ցուցանիշները (ծրագիր, միջոցառում, հոդված)՝ համեմատություններ, վերլուծություններ և որոշումներ կայացնելու համար: Անճշտություններ հայտնաբերելու դեպքում տվյալները չեն ընդունվելու և ուղարկվելու են նախորդ մակարդակ՝ խմբագրման:</p> <p>Բոլոր ԲԳԿ-ներից վերջնական ստուգված տվյալները ստանալուց հետո տվյալները ներկայացվելու են համապատասխան լիազորությամբ օժտված մարմնին՝ հաստատման (ՄԺԾԾ (ներառյալ առաջիկա տարվա բյուջե)-ն հաստատում է ՀՀ Կառավարությունը, առաջիկա տարվա բյուջեն հաստատում է ՀՀ ԱԺ-ն): Հաստատումից հետո տվյալները կհաստատվեն նաև համակարգում՝ ձևավորելով հաստատված բյուջեի տվյալներ:</p> <p>Հաստատված բյուջեից հետո ցանկացած փոփոխություն կիրականացվի վերաբաշխումների միջոցով (գործընթացը նկարագրված է սույն փաստաթղթի 3.4 ենթագլխում) հանգեցնելով նոր ճշտված բյուջեի տվյալների:</p>
Հղում առկա գործընթացին	ԲՄ4-ՄԺԾԾ (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) դրամաշնորհների ծախսային մասի ամփոփում

	<p>ԲՄ7-ՄԺԾԾ (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նպատակով պետական բյուջեի ծախսային մասի՝ արտաքին աղբյուրներից ստացվող վարկային ծրագրերի կանխատեսում</p> <p>ԲՄ8-ՄԺԾԾ Ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ենթավարկերի տրամադրում</p> <p>ԲՄ10-ՄԺԾԾ(ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) հայտերի ստացում, ուսումնասիրում, քննարկում և հաստատման ներկայացում</p> <p>ԲՄ11-Պարտադիր և շարունակական հայեցողական ծախսեր</p> <p>ԲՄ16-ԲԳԿ մարմինների կողմից ՄԺԾԾ(ներառյալ առաջիկա տարվա բյուջե) հայտերի ձևավորում և ներկայացում ՀՀ ՖՆ</p> <p>ԲԱ4-Առաջիկա տարվա պետական բյուջեի դրամաշնորհների ծախսային մասի ամփոփում</p> <p>ԲԱ7-Առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նպատակով պետական բյուջեի ծախսային մասի՝ արտաքին աղբյուրներից ստացվող վարկային ծրագրերի կանխատեսում</p> <p>ԲԱ8- Առաջիկա տարվա պետական բյուջեի ենթավարկերի տրամադրում</p> <p>ԲԱ10-Առաջիկա տարվա վերանայված հայտերի ստացում և հաստատում</p> <p>ԲԵ5-Դրամաշնորհների եռամսյակային (աճողական) համամասնություններ կանխատեսումների իրականացում</p> <p>ԲԵ6-Եռամսյակային (աճողական) համամասնությունների կանխատեսումների իրականացում վարկերի գծով</p> <p>ԲԵ6-Եռամսյակային (աճողական) համամասնությունների կանխատեսումների իրականացում վարկերի գծով</p> <p>ԲԵ9-ՊԲ կատարումը ապահովող եռամսյակային համամասնությունների հաստատում</p>
Տիրույթ	Բյուջեի կազմում ենթամոդուլ
Դերակատարներ	ԲԳԿ, ՀՀ ՖՆ
Մուտքային տվյալներ	
Ելքային տվյալներ	Բ1

3.3 Նոր նախաձեռնություններ




Նպատակ	Նոր նախաձեռնության առաջարկների ներկայացում
Նկարագրություն/ընթացք	<p>Արդեն գոյություն ունեցող ծրագրերից և միջոցառումներից բացի, բյուջետային հայտերում կարող են ընդգրկված լինել նոր նախաձեռնություններ ևս:</p> <p>Նոր նախաձեռնությունների ներկայացման գործընթացը նույնպես իրականացվելու է բյուջեի կազմման ենթամոդուլի միջոցով ԲԳԿ մարմնի կողմից: Յուրաքանչյուր նոր նախաձեռնության համար նույնպես ներկայացվելու են ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ցուցանիշներ: Ֆինանսական ցուցանիշների ծախսակազմման իրականացումը համապատասխանելու է 3.2 ենթազվիում նկարագրված գործընթացին: Ներկայացված նոր նախաձեռնությունները համակարգում ունենալու են “դիտարկման ենթակա” կարգավիճակ: ՀՀ Վարչապետի մոտ վերջնական հաստատում ստանալուց հետո միայն ծրագիրը-միջոցառումը կստանա հերթական հասանելի կողը: Համակարգում նոր կող գրանցելով՝ ավտոմատ գեներացվելու է գանձապետական ծախսային հաշիվը:</p> <p>Նոր նախաձեռնությունների մերժման դեպքում նախագիծը կստանա “մերժված” կարգավիճակ՝ ապասկտիվացնելով տվյալ նախաձեռնության տակ զետեղված բոլոր տվյալները: Ապասկտիվացված տվյալները սևագիր կարգավիճակով կպահվեն ԲԳԿ համակարգում հետագայում դրանք խմբագրման և նորից ներկայացման հնարավորությամբ:</p>

Հղում առկա գործընթացին	ԲՄ12-Նոր նախաձեռնություններ
Տիրույթ	Բյուջեի կազմման ենթամոդուլ,
Դերակատարներ	ՀՀ ՖՆ, ԲԳԿ/ԲՄԿ
Մուտքային տվյալներ	Հ1
Ելքային տվյալներ	Բ1.5

3.4 Վերաբաշխում


3.4.1 Վերաբաշխում առանց ՀՀ Կառավարության հաստատման



Նպատակ	Հաստատված բյուջեում վերաբաշխումների իրականացում՝ առանց ՀՀ Կառավարության հաստատման
--------	---

Նկարագրություն/ ընթացք	<p>ՀՀ ԱԺ կողմից առաջիկա տարվա պետական բյուջեն հաստատելուց հետո բյուջեում նախատեսվող փոփոխությունները տեղի են ունենում վերաբաշխումների միջոցով:</p> <p>Վերաբաշխումները նախատեսվում են իրականացնել Բյուջեի կազմման ենթամոդուլի օգնությամբ: Այն վերաբաշխումները, որոնք ՀՀ Կառավարության հաստատում չեն պահանջում, իրականացվելու են հետևյալ գործընթացով:</p> <p>Եթե վերաբաշխում նախաձեռնող մարմինը նախատեսում է իրականացնել ներհոդվածային վերաբաշխում, ապա համակարգով ինքնուրույն իրականացնելու է գործընթացը առանց վերադասի հաստատման: Համակարգը ինքնաշխատ կերպով թույլ չի տալու իրականացնել վերաբաշխում այն տողերի նկատմամբ, որոնց մասով գնումների մոդուլում սկսվել է գնումների գործընթաց:</p> <p>Եթե նախատեսվում է իրականացնել վերաբաշխում նույն միջոցառման տարբեր հոդվածների միջև (նույն բնույթի հոդվածների միջև, օրինակ՝ մեկ ընթացիկ ծախսային հոդվածից մեկ այլ ընթացիկ ծախսային հոդված), ապա նշելով էլքագրվող և մուտքագրվող հոդվածները և գումարի չափը՝ համակարգը ինքնաշխատ կերպով իրականացնում է նշված գումարի չափով միջոցների սառեցում: Հարկ է նշել, որ միջոցների սառեցում իրականացվում է միայն տվյալ պահին հասանելի ազատ միջոցների վրա ներկայացված գումարի չափով: Եթե նվազեցվող հոդվածում առկա է գնումների մոդուլում սկսված գնման գործընթաց՝ համակարգը թույլ չի տալու իրականացնել վերաբաշխում:</p> <p>Վերադաս մարմնի կողմից վերաբաշխման պահանջի հաստատման դեպքում համակարգում իրականացվելու են վերաբաշխման փոփոխությունները: Պահանջի մերժման դեպքում համակարգը ապաստեցնելու է միջոցները:</p> <p>Վերաբաշխման արդյունքում փոփոխված տվյալները հասանելի են լինելու Գնումների և Գանձապետարանի մոդուլին:</p>
Հղում առկա գործընթացին	ԲԵ11-Պետական բյուջեի վերաբաշխումներ
Տիրույթ	Բյուջեի կազմման ենթամոդուլ
Դերակատարներ	Նախաձեռնող մարմին, վերադաս մարմին
Մուտքային տվյալներ	
Ելքային տվյալներ	Բ1.3


3.4.2. Վերաբաշխում ՀՀ Կառավարության որոշմամբ



Նպատակ	Հաստատված բյուջեում վերաբաշխումների իրականացում՝ ՀՀ Կառավարության հաստատմամբ
Նկարագրություն/ ընթացք	<p>ՀՀ ԱԺ կողմից առաջիկա տարվա պետական բյուջեն հաստատելուց հետո բյուջեում նախատեսվող փոփոխությունները տեղի են ունենում վերաբաշխումների միջոցով:</p> <p>Վերաբաշխումները նույնպես նախատեսվում են իրականացնել բյուջեի կազմման ենթամոդուլի օգնությամբ:</p> <p>Մարմինը կարող է նախաձեռնել իրականացնել վերաբաշխում իրեն պատկանող ծրագրերի միջև, միջոցառումների միջև, հոդվածների միջև (բնութով տարբեր հոդվածների միջև, օրինակ՝ ընթացիկ ծախսային հոդվածից տեղափոխել կապիտալ բնույթի ծախսային հոդվածի) և եռամսյակների միջև: Այս դեպքում լրացնելով անհրաժեշտ մուտքագրվող և ելքագրվող տվյալները (ծրագիր, միջոցառում, հոդված, գումար)՝ համակարգը ինքնաշխատ կերպով իրականացնելու է նշված գումարի չափով միջոցների ստեղծում: Եթե նվազեցվող հոդվածում առկա է գնումների մոդուլում սկսված գնման գործընթաց, համակարգը թույլ չի տալու իրականացնել վերաբաշխում:</p> <p>Միջոցների ստեղծում իրականացվելու է միայն տվյալ պահին հասանելի ազատ միջոցների վրա ներկայացված գումարի չափով: Համակարգով իրականացվող գործընթացին զուգահեռ՝ մարմինը ՀՀ Կառավարության հաստատման է ներկայացնելու նաև համապատասխան վերաբաշխման նախագիծը: Եթե ՀՀ Կառավարությունը հաստատում է նախագիծը, ապա ՀՀ ՖՆ պետք է համակարգում նույնպես հաստատի վերաբաշխման պահանջը, որից</p>

	<p>հետո համակարգում կկատարվեն նախատեսված փոփոխությունները: Եթե ՀՀ Կառավարությունը նախագիծը մերժի, ապա ՀՀ ՖՆ պետք է համակարգով մերժի վերաբաշխման պահանջը, որի արդյունքում համակարգը ինքնաշխատ կերպով կապաստեցնի միջոցները:</p> <p>Վերաբաշխում կարող է նախաձեռնել նաև ՀՀ Կառավարությունը մի մարմնին պատկանող ծրագիրը տեղափոխել այլ մարմնի պատասխանատվության տակ: Այս դեպքում ՀՀ ՖՆ համակարգում լրացնելու է պահանջվող տվյալները (մարմիններ, ելքագրվող/մուտքագրվող ծրագիր, միջոցառում, հոդված, գումար): Մուտքագրելուց հետո համակարգը ինքնաշխատ կերպով ստեղծելու է նվազեցվող հոդվածի միջոցները: ՀՀ Կառավարության դրական որոշման դեպքում ՀՀ ՖՆ վերաբաշխման պահանջը կհաստատի, իսկ մերժման դեպքում միջոցները կապաստեցվեն:</p> <p>Բացի ֆինանսական ցուցանիշների փոփոխություններից, վերաբաշխումները կարող են ունենալ նաև ոչ ֆինանսական ցուցանիշների փոփոխություններ: Արդյունքային ցուցանիշների փոփոխությունները ևս մուտքագրվելու են համակարգ:</p> <p>Համակարգի օգնությամբ նկարագրված գործընթացով վերաբաշխումների իրականացումը կունենա մի շարք առավելություններ, մասնավորապես՝</p> <p>հնարավոր չի լինի վերաբաշխում անել գնումների մոդուլում գնման գործընթաց սկսված տողերի նկատմամբ:</p> <p>գումարների ստեղծումը իրականացվելու է ազատ միջոցների վրա, հնարավոր է լինելու վերահսկել միջոցների մնացորդները՝ թույլ չտալով միջոցների սահմանաչափից շատ վերաբաշխումներ կատարելու, վերաբաշխման գործընթացի առավել օպտիմալ կազմակերպում, համակարգը կգեներացնի բոլոր այն հավելվածները, որոնք ենթարկվել են փոփոխության վերաբաշխման արդյունքում:</p> <p>Հատուկ ծրագրերով ֆինանսավորման համար սահմանաչափի բացման գործընթացը իրականացվելու է բյուջեի կազմում ենթամոդուլի միջոցով: Գործընթացը առավել մանրամասն ներկայացված է Գանձապետարան մոդուլի փաստաթղթի 3.3.2 ենթագլխում:</p>
Հղում առկա գործընթացին	ԲԵ11-Պետական բյուջեի վերաբաշխումներ
Տիրույթ	Բյուջեի կազմման ենթամոդուլ
Դերակատարներ	ԲԳԿ, ՀՀ ՖՆ
Մուտքային տվյալներ	
Ելքային տվյալներ	Բ1.3

3.5 Ոչ հարկային եկամուտների կանխատեսում




Նպատակ	Հանրային իշխանության մարմինների կողմից ոչ հարկային եկամուտների կանխատեսումների ներկայացում ՀՀ ՖՆ
Նկարագրություն/ ընթացք	<p>Ոչ հարկային եկամուտների (այսուհետ՝ եկամուտ) կանխատեսման գործընթացում կարող են լինել անսահմանափակ քանակի և՛ օգտատերեր, և՛ մակարդակներ, որոնց լիազորությունները և հնարավորությունները սահմանվելու են օգտատերերի կառավարման մոդուլում:</p> <p>Տեղեկատվությունների տրամադրման աստիճանակարգման տեսանկյունից ՀՀ ՖՆ-ն տեղեկատվությունը ստանալու է անմիջապես հանրային իշխանության մարմիններից (գերատեսչություններ, մարզպետարաններ, նախարարություններ): Եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը հանրային իշխանության մարմինների կողմից ձևավորվելու և ներկայացվելու է համապատասխան հաշվարկներով, ինչպես նաև հաշվարկները հիմնավորող բացատրագրերով: Այս գործընթացի դեպքում չկա ԲԳԿ և ԲՄԿ կամ ծրագիր և միջոցառում տարանջատում: Յուրաքանչյուր մարմին տրամադրելու է իրեն բնորոշ ոչ հարկային եկամուտների վերաբերյալ կանխատեսումները ՀՀ ՖՆ համապատասխան վարչությանը, որտեղ հավաքագրված տեղեկատվությունները ստուգվելու և վերլուծվելու են՝ պետական բյուջեի մակարդակով եկամուտների կանխատեսումներ իրականացնելու համար:</p> <p>Ոչ հարկային եկամուտների կանխատեսված թիվը հանդիսանում է կարևոր տեղեկատվություններից մեկը ՄՔՎ համար՝ տվյալ տարվա հարկաբյուջետային շրջանակ կանխատեսելու և սահմանելու համար:</p> <p>Նշված գործընթացի ավտոմատացման արդյունքում հնարավոր կլինի տեղեկատվությունը հավաքագրել անհամեմատ արագ և արդյունավետ: Այլևս հարկ չի լինելու կատարելու ժամանակատար մեխանիկական աշխատանք (օրինակ՝ տարբեր մարմիններից ստացված xls տարբերակներով տվյալները համախմբել մեկ աշխատանքային xls մեջ, ստուգել բացակայող տվյալները, այլ համակարգ մուտք գործելով՝ տեսնել նախորդ տարվա տվյալները, ձեռքով մուտքագրել համակարգ ստացված տվյալները և այլն):</p> <p>Համակարգը ինքնաշխատ կերպով ցույց կտա այն մարմիններին, որոնք դեռ չեն ուղարկել պահանջվող տեղեկատվությունը՝ հնարավորություն տալով հիշեցումներ ուղարկելու: Ստացված տեղեկատվությունը հնարավոր է լինելու խմբավորել՝ ըստ տարբեր պարամետրերի՝ իրականացնելով առավել արդյունավետ աշխատանք և ճշգրիտ կանխատեսումներ:</p> <p>Եկամուտների կանխատեսման ենթամոդուլ կմուտքագրվեն նաև ՄՔՎ կողմից իրականացված հարկային եկամուտների վերաբերյալ կանխատեսումները: Արդյունքում եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը կունենա մեկ աղբյուր, և մուտքագրված</p>

	<p>ամբողջական տվյալների արդյունքում մեկ համակարգի շրջանակում հասանելի կլինեն պետության եկամուտների վերաբերյալ տվյալները:</p>
<p>Հղում առկա գործընթացին</p>	<p>ԲՄ3-ՄԺԾԾ (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) կանխատեսման նպատակով պետական բյուջեի եկամտային մասի՝ այլ եկամուտների կանխատեսումներ իրականացում</p> <p>ԲՄ5-ՄԺԾԾ (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) պետական բյուջեի եկամտային մասի՝ պետական տուրքի հայտերի հաշվառում</p> <p>ԲՄ6- ՄԺԾԾ (այդ թվում առաջիկա տարվա պետական բյուջեի) ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից բյուջետային մուտքեր</p> <p>ԲՄ15-ՄԺԾԾ (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նպատակով պետական բյուջեի եկամտային մասի՝ պաշտոնական դրամաշնորհների (ԵՄ բյուջետային աջակցության) կանխատեսումների իրականացում</p> <p>ԲԱ3-Առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նպատակով պետական բյուջեի եկամտային մասի՝ այլ եկամուտների կանխատեսումների իրականացում</p> <p>ԲԱ5-Առաջիկա տարվա պետական բյուջեի եկամտային մասի՝ պետական տուրքերի կանխատեսումների իրականացում</p> <p>ԲԱ6-Առաջիկա տարվա պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից բյուջետային մուտքեր</p> <p>ԲԱ11-Առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման նպատակով պետական բյուջեի եկամտային մասի՝ պաշտոնական դրամաշնորհների կանխատեսումների իրականացում</p> <p>ԲԵ1-Այլ եկամուտների Եռամսյակային (աճողական) համամասնություններ կանխատեսումների իրականացում</p> <p>ԲԵ2-Պաշտոնական դրամաշնորհներ Եռամսյակային (աճողական) համամասնություններ կանխատեսումների իրականացում</p> <p>ԲԵ3-Պետական տուրքի Եռամսյակային (աճողական) համամասնությունների կանխատեսումների իրականացում</p>

	ԲԵ4-Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի եռամսյակային (աճողական) համամասնություններ կանխատեսումների իրականացում
Տիրույթ	Եկամուտների կանխատեսման ենթամոդուլ
Դերակատարներ	Հանրային իշխանության մարմիններ, ԲԳԿՎ, ՄՔՎ
Մուտքային տվյալներ	
Ելքային տվյալներ	Բ2

3.6 Բյուջեի հաշվեկշռում (դեֆիցիտի հաշվեկշռում)




Նպատակ	Տարբեր մոդուլներից տվյալների ստացման արդյունքում բյուջեի հաշվեկշռման (այդ թվում՝ դեֆիցիտի հաշվեկշռման) իրականացում
Նկարագրություն/ընթացք	Նշված ենթամոդուլի օգնությամբ իրականացվելու է բյուջեի հաշվեկշռման գործընթացը: Բյուջեի հաշվեկշռման համար անհրաժեշտ տվյալները ստացվելու են տարբեր մոդուլներից և ենթամոդուլներից, մասնավորապես՝

	<p>Բյուջեի կազմման ենթամոդուլ-Այս ենթամոդուլից ստացվելու են ինչպես ՊԲ ծախսերի վերաբերյալ տվյալները (օրինակ՝ հաստատված բյուջեի տվյալներ, ճշտված բյուջեի տվյալներ), այնպես էլ ՊԲ էլքերի վերաբերյալ տվյալները: Տվյալները հնարավոր կլինեն ստանալ ինչպես բացված տարբերակով, օրինակ ծրագիր միջոցառումներով, այնպես էլ ագրեգացված՝ մեկ թվով:</p> <p>Եկամուտների կանխատեսման ենթամոդուլ-Այս ենթամոդուլից ստացվելու են ՊԲ ընդհանուր եկամուտների (հարկային և ոչ հարկային) վերաբերյալ տվյալները:</p> <p>Գանձապետարան մոդուլ-Այս մոդուլից ստացվելու են տարեսկզբյան ազատ մնացորդների և կայունացման դեպոզիտային հաշվի վերաբերյալ տվյալները:</p> <p>Պետական պարտքի և պարտավորությունների մոդուլներ-Այս մոդուլներից ստացվելու են տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերը (ներքին և արտաքին), ինչպես նաև ներգրավված միջոցների վերաբերյալ տվյալներ:</p> <p>Բյուջեի հաշվեկշռման ենթամոդուլի համակարգի օգնությամբ հնարավոր կլինի օպտիմալացնել ներկայումս իրականացվող գործընթացը, քանի որ անհրաժեշտ բոլոր տվյալները կստացվեն և կմշակվեն մեկ համակարգում: Այս գործիքը կարող է լինել նաև որպես կատարված աշխատանքների ստուգման գործիք, որի օգնությամբ հնարավոր կլինի պարզել շեղումների առկայությունը և դրանց առաջացման պատճառները (գործընթացի մանրամասները ներկայացված են 1.3 ենթագլխում):</p> <p>Համակարգը ստանալով անհրաժեշտ տվյալները հնարավոր է լինելու պարզել եկամուտների-մուտքերի նկատմամբ ծախսերի-էլքերի գերազանցման չափը (Բյուջեի դեֆիցիտը): Արդյունքում ստացված տեղեկատվությունը տրամադրվելու է ՊՊ մոդուլին՝ որոշելու դեֆիցիտի մարման համար անհրաժեշտ արտաքին (օր.՝ վարկերի ներգրավում) և ներքին (պարտատոմսերի թողարկում, կայունացման դեպոզիտային հաշվի օգտագործում) աղբյուրների միջոցով մարման տարբերակները և քանակը: Հաստատված տվյալները մուտքագրվելու են համակարգ՝ ապահովելով բյուջեի հաշվեկշռումը:</p>
Հղում առկա գործընթացին	<p>ԲՄ9-Բյուջեի դեֆիցիտի հաշվեկշռում ՄԺԾԾ</p> <p>ԲԱ9-Բյուջեի դեֆիցիտի հաշվեկշռում առաջիկա տարի</p> <p>ԲԵ8-Բյուջեի դեֆիցիտի հաշվեկշռում եռամսյակային բաշխում</p>
Տիրույթ	Բյուջեի հավասարակշռման ենթամոդուլ, Բյուջեի կազմման ենթամոդուլ, Եկամուտների կանխատեսման ենթամոդուլ, Գանձապետարան մոդուլ, ՊՊՊ մոդուլ,
Դերակատարներ	
Մուտքային տվյալներ	Բ1.2, Բ1.3, Բ1.4, Բ2.1, Բ2.2, ՊՊ1.1-ՊՊ1.5

3.7 Համայնքների բյուջե


3.7.1. Համայնքների հաստատված բյուջեների ստացում



Նպատակ	Ավագանու կողմից համայնքների հաստատված բյուջեների ներմուծում համակարգ
Նկարագրություն/ ընթացք	<p>Համայնքների բյուջե ենթամոդուլի օգնությամբ նախատեսվում է ստանալ ավագանու կողմից հաստատված համայնքների բյուջեները՝ եկամտային և ծախսային հոդվածները՝ հաստատված գումարներով: Համակարգը հնարավորություն կտա համայնքներին կամ նրանց հաստատված բյուջեները մուտքագրել համակարգ, կամ հնարավորության դեպքում կիրականացվի ինտեգրում այլ համակարգերի հետ՝ անհրաժեշտ տվյալների ավտոմատ ստացման համար:</p> <p>Այս մոդուլ են մուտքագրվելու նաև ՊԲ համայնքներին տրամադրվող դոտացիաների և սուբվենցիաների վերաբերյալ տվյալները: Համակարգում սահմանվելու են մի շարք ստուգումներ իրականացնելու մեխանիզմներ: Նախ համակարգը ստուգելու է, որ ըստ համայնքների բաշխված դոտացիաների թիվը չգերազանցի ՀՀ ՖՆ կողմից հաշվարկված</p>

	<p>դոտացիաների ընդհանուր թվին (այս թվի մեջ է մտնում նաև ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցման գումարները) (Պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4 տոկոսը): Քանի որ պետական բյուջեից համայնքներին տրամադրված դոտացիաները, սուբվենցիաները և պատվիրակված լիազորությունները համարվում են եկամուտներ, համակարգը ստուգելու է՝ արդյոք համայնքների կողմից տրամադրված հաստատված բյուջեներում նշված եկամուտները համապատասխանում են բյուջեի համապատասխան ծախսերն, թե ոչ: Անճշտությունների դեպքում համայնքը կտեղեկացվի՝ հնարավորություն ունենալով խմբագրելու ներկայացված տվյալները: Քանի որ համայնքների բյուջեները չեն կարող ունենալ դեֆիցիտ, համակարգը ստուգելու է նաև, համայնքի ներկայացրած բյուջե հաշվեկշռված լինելը: Բոլոր անհրաժեշտ ստուգումները անցնելուց հետո ճշտված տվյալները կպահպանվեն համակարգում:</p> <p>Այս ենթամոդուլում և բյուջետավորման մոդուլի այլ ենթամոդուլներում առկա տեղեկատվության հիման վրա հնարավոր կլինի ստանալ պետության մակարդակով համախմբված բյուջեի թիվը:</p>
<p>Հղում առկա գործընթացին</p>	<p>ԲԱ1-Համախմբված բյուջեի ցուցանիշների կանխատեսում ԲԱ2- «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքի կիրարկման՝ առաջիկա տարվա պետական բյուջեի գործընթացի իրականացման ապահովում:</p>
<p>Տիրույթ</p>	<p>Համայնքների բյուջեների ենթամոդուլ</p>
<p>Դերակատարներ</p>	<p>ՏԿԵՆ, Համայնքներ, ՀՀ ՖՆ</p>
<p>Մուտքային տվյալներ</p>	
<p>Ելքային տվյալներ</p>	<p>Բ4</p>

3.7.2 Համայնքների նախահաշիվների ստուգում հաստատված բյուջեների տվյալների հետ



Նպատակ	Համայնքների նախահաշիվների և հաստատված բյուջեի տվյալների ստուգումների իրականացում համակարգի միջոցով
Նկարագրություն/ ընթացք	<p>Համայնքները իրենց նախահաշիվները և ժամանակացույցները ևս պետք է մուտքագրեն, ոչ թե գանձապետարանի մոդուլում, այլ այս դեպքում բյուջետավորման մոդուլի համայնքների բյուջե ենթամոդուլում:</p> <p>Համակարգի ներդրման արդյունքում համայնքի կողմից նախահաշիվների մուտքագրումից հետո կիրականացվի ստուգում ընդունված բյուջեի պլանի հետ: Անճշտությունների դեպքում համայնքը կձանուցվի սխալի վերաբերյալ: Ճշտված նախահաշիվը մուտքագրելուց հետո նախահաշիվը կհաստատվի՝ հնարավորություն տալով համայնքին կատարել անհրաժեշտ վճարումները:</p> <p>Այս պահի դրությամբ համայնքերի ամբողջ կատարողական մասը արտացոլվում է գանձապետական մոդուլում, իսկ պլանավորման մասը բյուջետային մոդուլում չի արտացոլվում: Համակարգի ներդրմամբ հնարավոր կլինի ապահովել համայնքների բյուջեների պլանավորման և կատարման ամբողջ գործընթացը:</p>
Հղում առկա գործընթացին	
Տիրույթ	Համայնքների բյուջեների ենթամոդուլ, Գանձապետական մոդուլ
Դերակատարներ	Համայնքներ

Մուտքային տվյալներ	
Ելքային տվյալներ	Բ4